

## ԿԱՐԾԻՔ

### ԱՐՄԵՆ ԷԴՈՒԱՐԴԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

### «ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՏԱԹԵՎԸ ԵՎ ՆՐԱ ԳՐԱՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

### ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ» ՎԵՐՏԱՌՈՒԹՅԱՄԲ

### Է.00.03 «ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՄԱԿԱՆ

### ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ

### ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վանական համալիրները կարևոր տեղ ու դեր ունեն միջնադարյանի Հայաստանի գրավոր-մշակութային ժառանգության ձևավորման և զարգացման գործում՝ հաճախ հանդիսանալով գրավոր-մշակութային գործունեության ծավալման հիմնական օջախները: Ուստի՝ ներկայումս, կապված հայագիտության զարգացման և նրա տարբեր գիտաճյուղերի՝ միջազգային գիտական հարթակներում մրցունակության բարձրացման հրամայականների հետ, կարևորվում է հայագիտության աղբյուրագիտական հենքը նորանոր՝ վստահելի սկզբնաղբյուրներով հարստացնելու գործընթացը:

Նշված առումներով խիստ կարևորված են Հայաստանի միջնադարյան վանական համալիրների գրական-մշակութային գործունեության ուսումնասիրությունը, միջնադարյան վավերագրերի համաբերումն ու համակարգումը, որը էական ներդրում է հայագիտության մեջ: Ասվածի համատեքստում ողջունելի է Ա. Հարությունյանի «Միջնադարյան Տաթևը և նրա գրավոր-մշակութային ժառանգությունը» թեմայով ատենախոսության ի հայտ գալը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլխից, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից, ինչպես նաև ընդարձակ ու բազմաբովանդակ հավելվածից: Հեղինակն ըստ էության հաջողված փորձ է կատարել մեկ գիտահետազոտական աշխատանքի

շրջանակներում ի մի բերելու Տաթևի վանքի պատմաաշխարհագրական միջավայրի ողջ մշակութային ժառանգությունը:

Ներածության մեջ հեղինակը հստակորեն ներկայացնում է թեմայի գիտական նշանակությունն ու արդիականությունը, ուսումնասիրվածության աստիճանը, հետազոտության նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, հիմնավորում ընտրված ժամանակագրական շրջանակը, վերլուծում թեմային առնչվող սկզբնաղբյուրային և վերլուծական գրականությունը:

Ատենախոսության առաջին գլխում («Տաթևի վանական համալիրը և վիմական արձանագրությունները») հեղինակն անդրադարձել է Սբ Եվստաթեոս առաքյալի ավանդությանը, Տաթևի վանական համալիրի եկեղեցիներին, կոթողային հուշարձաններին, այլ կառույցների ու վիմական արձանագրություններին: Նշված խնդիրներից յուրաքանչյուրին հեղինակը հատկացրել է առանձին ենթավերնագիր՝ խորությամբ քննելու նպատակադրումով:

Հատկապես շահեկան է առաջին գլխի առաջին («Սբ Եվստաթեոս առաքյալի ավանդությունը»), երկրորդ («Կաթողիկե Սբ Առաքելոց եկեղեցին») և տասներորդ («Եկեղեցական արձանագիր առարկաները») ենթագլուխներում ներկայացվածը, քանի որ այնտեղ հանգամանորեն լուսաբանված են Տաթևի վանական համալիրի անվան ծագումնաբանության և Կաթողիկե եկեղեցու ճարտարապետական առանձնահատկությունների հարցերը, ինչպես նաև պահպանված արձանագրությունները:

Ատենախոսության երկրորդ գլխում («Տաթևի վանքը՝ գրչության և ուսումնագիտական կենտրոն») հեղինակը քննության է առել Տաթևի վանքում ընդօրինակած ձեռագրերը, անդրադարձել մանրանկարչության Տաթևի դպրոցին, պահպանված հիշատակարաններին, դրանց աղբյուրագիտական արժեքին, գրատուն-մատենադարանին, դպրոց-վարդապետարանին և համալսարանին՝ հանգելով կարևոր եզրակացությունների:

Ատենախոսության երրորդ գլուխը («Որոտանի կիրճի՝ Տաթևի վանքապատկան հին գյուղատեղերի պատմամշակութային ժառանգությունը») մանրակրկիտ տեղեկություններ է պարունակում նշված պատմաաշխարհագրական միջավայրում առկա պատմամշակութային ժառանգության հուշարձանների մասին: Ըստ էության,

այդ գլխում ներկայացված է տվյալ միջավայրի պատմամշակութային ժառանգության հուշարձանների համահավաք ցանկ-նկարագրություն:

Ատենախոսության չորրորդ գլխում («Տաթևի վանքին հարակից փոքր եկեղեցիները») հեղինակն անդրադարձել է Տաթևին հարևան հինգ եկեղեցու՝ ներկայացնելով դրանց նկարագրություն-վերլուծությունը: Գլուխը առաջին երեք գլուխների համեմատ համառոտ է, սակայն հեղինակն ամենայն հավանականությամբ անհրաժեշտ է համարել առանձին գլխով ներկայացնել նշված եկեղեցիները:

Ատենախոսության հինգերորդ գլխում («Անապատական շարժման վերագարթոնքը Սյունիքում») հեղինակը քննության նյութ է դարձրել Տաթևի ուսումնասիրության տեսանկյունից կարևոր հիմնահարց՝ անապատական շարժումը և Սյունյաց երեք հռչակավոր անապատները:

Այնուհետև հեղինակը ներկայացնում է իր եզրակացությունները՝ փորձելով հնարավորինս հիմնավոր ներկայացնել հետազոտության արդյունքները: Նշեմ, որ Ա. Հարությունյանի եզրակացությունները բխում են հեղինակային վերլուծությունից, հիմնավորված են և ընդունելի:

Ատենախոսությանը կից Ա. Հարությունյանը ներկայացնում է նաև ընդարձակ և բազմաբովանդակ հավելված՝ արձանագրությունների աղյուսակներով, ձեռագրացուցակներով, համառոտագրությունների ցանկով, վանահայրերի գավազանագրքով, չափագրություններով, լուսանկարներով, գրչանկարներով և քարտեզներով, որոնցով մեծապես բարձրանում է ատենախոսության արժեքը:

Անհրաժեշտ է նշել, որ ատենախոսության՝ հեղինակի օգտագործած աղբյուրային հենքը և դաշտային ուսումնասիրության նյութը լիովին բավարար են արդյունավետ, բովանդակային և ամբողջական վերլուծություն կատարելու համար:

Հեղինակն ուսումնասիրության ընթացքում նաև ըստ անհրաժեշտության անդրադարձել է տարբեր հետազոտողների տեսակետներին, քննարկել դրանք՝ տեքստը օժտելով բոլոր անհրաժեշտ հղումներով:

Ատենախոսության մեջ հեղինակի կատարած քննությունն ու արտահայտած կարծիքները հիմնավոր են և օբյեկտիվ: Ա. Հարությունյանը հանդես է բերել աղբյուրային և վերլուծական գրականության հետ աշխատելու հմտություններ, գիտական աշխատանք կատարելու էական ընդունակություններ, խնդիրներ

սահմանելու և դրանք հետևողականորեն լուծելու կարողություններ, որի արդյունքում մասնագիտական խորհրդի դատին է հանձնվում կարևոր և արդյունավետ գիտական աշխատություն:

\*\*\*

Ա. Հարությունյանի ատենախոսության վերաբերյալ իմ լիովին դրական կարծիքին զուգահեռ ներկայացնում եմ նաև մի քանի դիտարկումներ:

1. Առաջին դիտարկումն վերաբերում է ատենախոսության մեջ օգտագործված հասկացություններին: Մասնավորապես, երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում նշված է «Սյունյաց մանրանկարչության Տաթևի դպրոցի» մասին: Այստեղ երկու հասկացություն կարիք ունեն հստակեցման և հայեցակարգային սահմանման՝ Սյունյաց մանրանկարչությունը և Տաթևի դպրոցը, քանի որ նման համատեքստում օգտագործվող «Սյունյաց մանրանկարչություն» և «Տաթևի դպրոց» հասկացությունները նախատեսում են մասնագիտական երկարատև և նպատակային ընթացք, ձևավորված ավանդույթներ և տվյալ ու հարակից միջավայրերի վրա զգալի ազդեցություն: Չժխտելով, որ եղել են թե՛ «Սյունյաց մանրանկարչություն» և թե՛ «Տաթևի դպրոց», որոնց մասին նախկինում էլ խոսվել է, համոզված ենք, որ այդ արտահայտությունների համար տեսական հիմքերի ամրապնդումը կդառնար սույն ատենախոսության ևս մեկ կարևոր արժանիքը:
2. Երկրորդ գլխի ենթագլուխներից երրորդի վերնագիրը՝ «Հիշատակարանների աղբյուրագիտական արժեքը», ձևակերպված է անհստակ, գուցե կարիք կար հավելելու «Տաթևի վանքում ստեղծված» բառերը:
3. Երրորդ գլխի վերնագրում և տեքստում օգտագործված է «հին գյուղատեղերի պատմամշակութային ժառանգություն» արտահայտությունը, որը բովանդակային ընկալման խնդիր ունի, քանի որ պատմամշակութային ժառանգությունը ոչ թե հին գյուղատեղերինն է, այլ գյուղերինը կամ, ավելի որոշակի, վերջիններիս պատմաաշխարհագրական միջավայրինը:

Դիտարկումների առաջին երեք կետերում նշվածը զուտ տեսական բնույթի է, որևէ կերպ չեն նսեմացնում ատենախոսի կատարած աշխատանքը և նրան կարող է օգտակար լինել հետագայում:

4. Առաջին գլխի վերնագիրը («Տաթևի վանական համալիրը և վիմական արձանագրությունները») նախատեսում է վիմական արձանագրությունների՝ առանձնաբար և համակարգված ներկայացում, սակայն տվյալ գլխում նման համակարգում չի նշմարվում մինչև 10-րդ ենթագլուխը:
5. Չորրորդ գլխի առաջին ենթագլխում Աղանձ գյուղատեղին ներկայացնելը չի համապատասխանում գլխի բովանդակությանը, որը նվիրված է Տաթևի վանքին հարակից փոքր եկեղեցիներին: Այդ գյուղատեղիի տեղը գուցե երրորդ գլխում է, եթե պայմանականորեն հնարավոր համարվի դրա ներկայացումը Որոտանի կիրճի գյուղատեղիների հետ:
6. Ատենախոսության տարբեր գլխներում հեղինակը հաճախ խոսում է 16, 17 և 18-րդ դարերի մասին (էջ 138, 292-294 և այլն): Բոլորովին դեմ չլինելով դրան՝ նշեմ սակայն, որ հեղինակն անհրաժեշտաբար պետք է ներկայացնեք միջնադարի ժամանակային ընդգրկման իր մոտեցումը, քանի որ ատենախոսության վերնագրի՝ «Միջնադարյան Տաթև» բառակապակցությունը նրան որոշակի ժամանակային շրջանակներ է պարտադրում: Ատենախոսության 10-րդ և սեղմագրի 5-րդ էջում հեղինակը ընդհանրական գրում է, որ ատենախոսության ժամանակագրական շրջանակներն ընդգրկում են միջնադարը՝ իր վաղ, զարգացած և ուշ շրջափուլերով՝ չնշելով դարերը: Խնդիրն այն է, որ, օրինակ՝ վերջերս տպագրված «Հայոց պատմության» ակադեմիական հրատարակության մեջ 17-րդ դարի կեսը դիտարկվում է որպես միջնադարի ավարտ և նոր ժամանակների սկիզբ (հատոր III, գիրք առաջին, Երևան, 2010), իսկ արևմտյան պարբերացումներում հիմնականում միջնադարն ավարտվում է 15-րդ դարով:

\*\*\*

Նշված դիտարկումներն չեն ազդում ատենախոսության արժանիքների վրա:  
Դրանք ատենախոսին օգտակար կլինեն հետագա ուսումնասիրություններում:

Ա. Հարությունյանը կատարել է ուշագրավ աշխատանք, որտեղ ակնհայտ է նրա խոսքը և վերլուծական միտքը:

Ատենախոսությունը շարադրված է գրագետ հայերենով, հեղինակի հրատարակած հոդվածներն ու սեղմագիրն էլ արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

\*\*\*

«Հայաստանի Հանրապետությունում գտական աստիճանների շնորհման կարգի» 22-րդ կետի համաձայն, ուսումնասիրելով ատենախոսությունը և այդ թեմայով հեղինակի հրատարակված աշխատանքները, ներկայացնում եմ հետևյալը.

1. ատենախոսության թեման արդիական է,
2. ատենախոսության մեջ առկա դրույթներն և եզրահանգումները հեղինակային են, հիմնավոր, իսկ փոխառված մտքերն ու դիտարկումները՝ պարտադիր հղված,
3. ատենախոսության մեջ քննարկված թեմատիկան, ներկայացված դրույթներն ու եզրահանգումները նոր են և հիմնավոր:


\*\*\*

Այսպիսով՝ Արսեն Էդուարդի Հարությունյանի «Միջնադարյան Տաթևը և նրա գրավոր-մշակութային ժառանգությունը» վերնագրով Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 8-րդ կետերին և գնահատելի է իբրև գիտության տվյալ բնագավառում էական նվաճում:

Ասվածի հիմքով համարում եմ, որ Արսեն Էդուարդի Հարությունյանն արժանի է իր հայցած՝ Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

պ.գ.դ. Արման Սամվելի Եղիազարյան



Պ.գ.դ. Ա. Ս. Եղիազարյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտական քարտուղար, պ.գ.թ. Մ. Վ. Հովհաննիսյան



15.10.25թ.



13.10.2025 թ.